

Միաբանութենէն, կ'ըլլան վարդապետ եւ յետոյ՝ Հայ Մատենագրութեան եւ Պատմութեան կը հանդիսանան փառք ու պարծանք, որպէս՝ Հ. Փիլիպպոս ճամճեան, Հ. Պետրոս Պիւլպիւլճեան, Հ. Յովակիմ Աղարեան, Հ. Սրապիոն Էմինեան, Հ. Եփրեմ Չաքրճեան, Հ. Կղէմէս Սիպիլեան եւ Հ. Արսէն Արքեպ. Ատրնեան արդի ԱբբաՏայրը:

Պատանին Սեւեան վիեննայէ Կ. Պոլիս դառնալով, քանի մը ամիս կը մնայ անորոշ վիճակի մէջ. յետոյ բարեկամներու խորհուրդով կ'որոշէ հետեւիլ բժշկութեան, ուստի կ'արձանագրուի բժշկական Գպրոցը՝ 1844 Յունուար 7ին:

Կայս. Բժշկական վարժարանն յաճախող առաջին Հայ ուսանողներէն մին կ'ըլլայ, եւ ընկեր կ'ունենայ Բարունակ Ֆէրուհիսան, Ստեփան Ասլանեան, Բաղլատիեան, Յակոբ Յովհաննէսեան ուշիմ պատանիները:

Հաղիւ երկու ամիս կը շարունակէ, եւ ահա շուտով յայտնի կ'ընէ Սեւեան չափական գիտութեանց մէջ ունեցած իւր մեծ կարողութիւնն ու հմտութիւնը, որով շատ չանցած վարժարանի տեսչութիւնը կ'ընտրէ զինքը «կրկնիչ» այս ճիւղին:

Այլ սակայն, միայն չափական գիտութեանց մէջ չէր որ յառաջագեմ էր, բժշկական գիտութեանց մէջ ալ կ'ըլլար նա հետզհետէ նշանակելի, այնչափ որ, տակաւին բժշկական վկայականը չառած, 1847 Սեպտեմբեր 15ին, երբ Կ. Պոլիս քոլէրայի համաճարակէ կը կեղեքուէր, պաշտօնապէս նա կ'անուանուէր բժիշկ Միջագիւղի թաղին, ուր չորս ամիս շարունակ ճարտարապէս կը դարմանէ բազմաթիւ հիւանդներ:

Երկու տարի յետոյ, 1849 Յունիս 20ին, փառաւոր եւ յաջողակ քննութիւններով կը վկայուի՝ Տրքթոր-բժիշկ, Բարունակ Քոթեկեանի, Յակոբ Յովհաննէսեանի, Բաղլատիեանի հետ, եւ այսօր՝ կը լրացնէ նա իւր Տրքթորութեան յիսնորոր տարին:

Վկայականը ստանալէն անմիջապէս վերջը, նորապսակն Տրքթ. Սեւեան, Հաղարապետի աստիճանով կ'անուանուի բժիշկ Կ. Պոլսոյ Մ. Ընկերակցութեան զինուորական հիւանդանոցին, ուր տարի մը միայն պաշտօնավարելէն ետքը, զինքը բոլորովին կը նուիրէ ծովային բժշկութեան:

1850 Մայիս 15ին է, որ Տրքթ. Սեւեան՝ առաջին Հայն ըլլալով, կը կոչուի այս պաշտօնին եւ կը կարգուի բժիշկ կայսերական Շահապը

Պահլէ անուն մարտանաւին, որ ամիս մը վերջը կ'ուղեւորէր դէպ ի Թուրքի Գաղղոց:

Ի դարձին հազիւ թէ քանի մը ամիս կ'անցնի, կը յղուի Սամոս, որ ապստամբած էր, եւ ուր Օսմ. բանակներուն հրամանատար Պոնաբազ Մուստաֆա Փաշայէն կ'անուանուի բժշկապետ ծովային եւ միանգամայն ցամաքային հիւանդանոցներուն:

Տրքթ. Սեւեան Սամոսի մէջ կը պաշտօնավարէ 1851 Յունուարէ մինչեւ Մայիս 1852, այսինքն՝ մինչեւ որ կղզին կատարեալապէս կը հանդարտի:

1852 Յունիս 2ին, Քայսերլի Ահմէտ Փաշայի հրամանատարութեամբ Սուրիական ծովափունքը խրկուած Կայս. նաւատորմին զխաւոր բժիշկ կը կարգուի եւ այս պաշտօնին մէջ կը մնայ մինչեւ 1855:

1856 Օգոստոս 2ին կը յղուի Եգիպտոս Սեֆէ շահի շոգենաւով, որ վախճանեալ Իհնամի իշխանազուն Փաշային մարմինը Կ. Պոլիս կը բերէր: Այս ճամբորդութենէն օգուտ քաղելով, Տրքթ. Սեւեան կ'այցելէ Եգիպտոսի զանազան հիւանդանոցներուն եւ կը ծանօթանայ այն առնւան Եգիպտաբնակ Հայ երեւելիներուն:

1857 Օգոստոս 13ին կը զրկուի Անգղիա Ֆէրէֆէ մարտանաւով, որ հոն իւր մեքենաները զետեղել պիտի տար: Այս առթիւ Տրքթ. Սեւեան կը բարձրանայ Կայսերական Տեղակալ-Գնդապետի (Lieutenant-colonel) աստիճանին, բայց քանի թանկ կ'ըլլայ իրեն այս բարձրացումը, որուն կ'արժանանար բարձ. 8 տարւան չարատանջ յոգնութիւններէն վերջը, եւ քանի՞ դառն յիշատակներով կը լեցուի այս ուղեւորութիւնը:

1857 Սեպտեմբեր 24ին Ֆէրէֆէն սոսկալի փոթորկի մը կը բռնուի, այնչափ մեծ վնասներ կը կրէ, որ անդէկ եւ անկայմ մնալով, հողմերու եւ ալիքներու սաստկութեանց մատնուած, ընկղմելու վտանգին մէջ՝ կ'երթայ Սպանիոյ հարաւային եզերքը՝ Ֆէրրոլի մօտ, ուր կը ստիպուի խարխիս նետել եւ մնալ գրեթէ 9 ամիս, ամենակարեւոր նորոգութիւնները կատարելու:

Այս տխուր արկածին մէջ Սեւեան անտանելի ճգնաժամեր կ'ունենայ, ոչ միայն իբրեւ բժիշկ անձնուրաց հոգածութեամբ կը ինամէ նաւին հիւանդները, այլ եւ իբրեւ հաւատարիմ հպատակ իւր Տէրութեան, անոր կենսական շահերն ալ պաշտպանելու հնարիմաց քաջութիւնը կ'ունենայ, ինչպէս վկայ է հետեւեալ